ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի

կառավարման խորհրդի նախագահ

«4» մայիսի 2025 թվական

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ

Հրազդան 2025

1.Քաղաքականության նպատակը

ԿՏՊՔ միջազգայնացման և արտաքին կապերի քաղաքականության նպատակն է խթանել կրթության որակի բարձրացումը, միջազգային, նորարար մոտեցումների կիրառումը, ինչպես նաև միջազգային գործընկերային կապերի ամրապնդումը՝ նպաստելով քոլեջի մրցունակության բարձրացմանը: Սույն քաղաքականությունը մշակվել է՝ հաշվի առնելով կրթական հաստատությունների միջազգայնացման կարևորությունը և քոլեջի զարգացման ռազմավարական ուղղությունները: Այն ուղղված է քոլեջի՝ գլոբալ կրթական տարածքում տեսանելիության բարձրացմանը, նոր համագործակցային հնարավորությունների ստեղծմանը և միջազգային չափանիշներին համապատասխան կրթական ծրագրերի իրականացմանը:

2. Հիմնական խնդիրները

Սույն քաղաքականության իրականացումը կոչված է լուծելու հետևյալ հիմնախնդիրները՝

- ✓ **Միջազգային և արտաքին կապերի զարգացում**

Քոլեջի միջազգային համագործակցությունների ընդլայնում՝ խթանելով ուսանողների և դասախոսների փորձի փոխանակման հնարավորությունները:

- ✓ **Միջազգային, նորարար մոտեցումների դիտարկում և կիրառում**

Փորձված, միջազգային արդյունավետ մոտեցումների, հնարավորությունների դիտարկում և ինտեգրում, որոնք ուղղված կլինեն հաստատության տարբեր ուղղությունների բարելավմանը:

- ✓ **Օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության զարգացում**

Օտարալեզու և բազմամշակութային հմտությունների խրախուսում և զարգացում:

- ✓ **Գործընկերային հարաբերությունների զարգացում քոլեջների և համալսարանների հետ**

Գործընկերային ցանցի ընդլայնում՝ նոր կրթական ու հետազոտական հնարավորություններ ստեղծելու նպատակով:

- ✓ **Քոլեջի միջազգային ճանաչելիության ստեղծում և ամրապնդում**

Թվային հարթակում միջազգային կրթական հաստատությունների, կազմակերպությունների և միջազգային կրթական կառույցների շրջանում քոլեջի տեսանելիության բարձրացում:Քաղաքականությունը կոչված է ապահովելու քոլեջի միջազգային համագործակցության ամրապնդումը, ուսանողների և դասախոսների համար գլոբալ կրթական հնարավորությունների ընդլայնումը և ուսումնական գործընթացների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:

3. Տեսլականը և առաքելությունը

3.1. Տեսլականը

ԿՏՊՔ-ի միջազգայնացման տեսլականն է՝ դառնալ տարածաշրջանում ճանաչված և մրցունակ կրթական հաստատություն, որը խթանում է միջազգային համագործակցությունը, ապահովում է ուսանողների և դասախոսների մասնագիտական զարգացումը և ձգտում է միջազգային չափանիշներին համապատասխան կրթական ծրագրերի իրականացում և բենչմարքինգ:

Քոլեջը նպատակ ունի ստեղծել կրթական միջավայր, որտեղ ուսանողները ձեռք կբերեն արդի գիտելիքներ, միջմշակութային հաղորդակցության հմտություններ և միջազգային աշխատաշուկային համապատասխան կարողություններ:

3.2. Առաքելությունը

Քոլեջի միջազգայնացման քաղաքականության առաքելությունն է ամրապնդել կրթական տարբեր ոլորտներում համագործակցությունը միջազգային մակարդակում, խթանել արտաքին կապերի զարգացումը և ապահովել կրթական միջազգային հնարավորությունները, որոնք համահունչ տարրեր կպարունակեն միջազգային ակադեմիական չափանիշներին համապատասխան:

4. Հիմնական սկզբունքները

- **Միջազգային համագործակցության ինստիտուցիոնալ մոտեցում**

Քոլեջը պարտավորվում է մշակել և իրականացնել միջազգային համագործակցության ռազմավարական մոտեցումներ, որոնք համապատասխանում են հաստատության զարգացման առաջնահերթություններին:

- **Միջազգային կրթական չափանիշներին համապատասխանություն**

Կրթական ծրագրերն ու համագործակցությունները պարունակում են համապատասխանության տարրեր ընդունելի միջազգային կրթական չափանիշների և լավագույն ակադեմիական պրակտիկաների հետ:

- **Հավասար հնարավորություններ և ներառականություն**

Քոլեջի միջազգային համագործակցության քաղաքականությունը ապահովում է ուսանողների և դասախոսական կազմի հավասար ներգրավվածություն:

- **Թափանցիկություն և հաշվետվողականություն**

Միջազգայնացման և արտաքին կապերի բոլոր գործընթացները իրականացվում են թափանցիկության սկզբունքի հիման վրա՝ խթանելով արդյունավետ մշտադիտարկումը և գնահատումը:

- **Գիտելիքի և փորձի փոխանակում**

Քոլեջը խթանում է միջազգային կրթական և հետազոտական համագործակցությունները՝ նպաստելով նորարարական գաղափարների և լավագույն փորձի փոխանակմանը:

- **Միջմշակութային հաղորդակցության զարգացում**

Քոլեջի միջազգայնացման գործընթացները նպաստում են՝ բազմալեզու և միջմշակութային հաղորդակցման կարողությունների զարգացմանը՝ ներառելով շահառուների համապատասխան և տարբեր թիրախներ:

- **Միջազգային ցանցի ընդլայնում և ամրապնդում**

Քոլեջը նպատակ ունի ստեղծել և զարգացնել միջազգային գործընկերային հարաբերություններ՝ ներգրավելով առցանց ռեսուրսներ և հնարավորություններ:

- **Կայուն և երկարաժամկետ զարգացում**

Քոլեջի միջազգայնացման քաղաքականությունը հիմնված է երկարաժամկետ և կայուն զարգացման սկզբունքների վրա՝ ապահովելով միջազգային գործընկերությունների շարունակականության ապահովումը և արդյունավետությունը:

5. Հիմնական արժեքները

- **Գերազանցություն**

Քոլեջը ձգտում է որակյալ կրթության ապահովմանը, գործընկերային կապերի հաստատմանը՝ շարունակաբար զարգացնելով ակադեմիական և կառավարչական համակարգերը:

- **Հանդուրժողականություն և հարգանք**

Միջազգային համագործակցություններում և կրթական միջավայրում քոլեջը խթանում է մշակութային տարբեր արժեքների միջև փոխադարձ հարգանքը, բազմազանության ընդունումը և հանդուրժողականությունը:

- **Նորարարություն և զարգացում**

Քոլեջը խրախուսում է նորարարական գաղափարների, մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան կրթական գործընթացներ ապահովելու նպատակով:

- **Գլոբալ մտածողություն**

Քոլեջը կարևորում է ուսանողների և դասախոսների գլոբալ մտածողությունը՝ խրախուսելով բաց լինել տարբեր մշակույթների և կրթական համակարգերի նկատմամբ:

- **Կայունություն և սոցիալական պատասխանատվություն**

Քոլեջը միջազգային գործունեության համատեքստում հավատարիմ է կայուն զարգացման նպատակներին և սոցիալական պատասխանատվության սկզբունքներին՝ ապահովելով ներդրում կրթության, գիտության և հասարակության զարգացման գործում:

- **Կառուցողական համագործակցություն**

Քոլեջը կարևորում է գործընկերային միջավայրը, որտեղ միջազգային կապերը նպաստում են փոխշահավետ կրթական և հետազոտական նախաձեռնությունների իրագործմանը:

- **Կենսունակ կրթական միջավայր**

Միջազգային համագործակցությունների շնորհիվ քոլեջը ձգտում է ստեղծել միջավայր, որտեղ ուսանողները և դասախոսները կարող են անընդհատ սովորել, զարգանալ և ձեռք բերել մրցունակ հմտություններ:

- **Մշակութային փոխընկալում**

Քոլեջը խրախուսում է մշակութային փոխըմբռնումը և բազմազանության ապահովումը՝ խրախուսելով միջմշակութային հաղորդակցման զարգացումը:

6. Արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտները, ուղղությունները

- **Մարդկային ռեսուրսների զարգացում**

- Դասախոսների և վարչական անձնակազմի մասնագիտական զարգացման ծրագրերի իրականացում միջազգային գործընկերների հետ:
- Միջազգային վերապատրաստման ծրագրերին ներգրավվածության խթանում:
- Միջազգային կոնֆերանսներին, ֆորումներին և կրթական միջոցառումներին մասնակցության խթանում:
- Դասախոսների միջմշակութային հաղորդակցման և օտար լեզվի հմտությունների զարգացում:

❖ **Միջազգային համագործակցություններ և արտաքին կապեր**

- Գործընկերային կապերի հաստատում այլ քոլեջների, համալսարանների և ուսումնական կենտրոնների հետ:
- Համագործակցություն միջազգային կրթական կազմակերպությունների և ասոցիացիաների հետ :
- Հրավիրված դասախոսների և փորձագետների ներգրավում կրթական գործընթացներում:
- Համատեղ նախագծերի և ուսումնական փոխանակման ծրագրերի իրականացում:
- Պաշտոնական կայքէջի վերազինում՝ հաշվի առնելով արտաքին շահակիցների կարիքները:

❖ **Միջազգային տեսանելիության բարձրացում**

- Քոլեջի միջազգային տեսանելիության զարգացում և բարելավում՝ թվային և սոցիալական մեդիա հարթակներում (Linkedin):

❖ **Մշակութային և փոխանակման ծրագրեր**

- Միջմշակութային հաղորդակցման և համատեղ միջոցառումների կազմակերպում:
- Միջազգային փոխանակման և պրակտիկայի ծրագրերի հնարավորությունների ներկայացում ուսանողներին:
- Ուսանողների մասնակցության ապահովում միջազգային մրցույթներին և գիտաժողովներին:
- Ուսանողների ներգրավում միջազգային համաժողովներին, ակումբներին և միջազգային երիտասարդական ծրագրերին:
- Հրավիրյալ դասախոսների կողմից կրթական խորհրդատվության և բաց քննարկումների կազմակերպում՝ նաև միջազգային մասնագետների մասնակցությամբ:

❖ **Կրթական ծրագրերի միջազգայնացում՝ իրականացնելով բենչմարքինգ**

- Միջազգային չափանիշներին համապատասխան կրթական ծրագրերի բարելավում՝ բենչմարքինգի հիման վրա:
- Համատեղ ուսումնական ծրագրերի ստեղծում միջազգային գործընկերների հետ:
- Միջազգային կրթական հարթակների (Coursera, Udemy) ինտեգրում ուսումնական գործընթացում:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ք. Հակոբյան